Առաւօտ է. ահաւասիկ մեր դիմացը կ'ելնէ զուարթատեսիլ հաւ մը, մերթ գլխին վրայ կը բանայ հովահար մը, մերթ կը գոցէ զայն, կարծես առաւօտեան աստղը կը բարեւէ. միշտ կը շարժի, միշտ ահաբեկ կը դողդըղայ։ Սորա հայրենիքն՝ չէ միայն Պոնտոս, այլ և Արարատ և Կիլիկիա, Արցախ և Սիւնիք։ Սա նազելի համարուած է տեսքով և բարքով. եգիպտացիներէն կը մեծարի, և ի մեզ կը հանդիսանայ եղբայրսիրութեան օրինակ և ուրախութեան նշանակ. անշուշտ գուշակեցիր ընթերցող թէ ցոպոպն է սա։

Մինչդեռ կը զմայլինք ցոպոպին գոյնզգոյն փետրոց և գեղանի ցցուններուն վրայ, աշխոյժ թռչնիկ մը կարծես բոլորովին օտար մեր աշխարհին՝ շուարած, օդոյ մէջ իւր թռռիչներով շարժական լաբիւրինթոսներ կը գծէ։ Ծիծառն է սա, զոր ռամիկն կաթոգին կը սիրէ, և ամենայն խնամք կը տանի՝ վախնալով թէ մի գուցէ իրեն կովուն ծիծն խայթելով, կաթէ զրկէ կենդանին. և ասի գուցէ հայկական քնքուշ անուամբ կոչուած է Ծիծառն. Ծիծ — առնել։

Շարայարելի

Հ. ՍԻՄՈՆ Ե.

---

# ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

## Ի ԹՐԵՍՏ ԵՒ Ի ՎԻԵՆՆԱ

(1776–97)

(Շար. տես էջ 60)

Վիեննացի Մխիթարեան ուխտին տպարանն և տպագրութիւնք, որ այնչափ փայլ պիտի յաւելուին ժամանակաւ ազգային այս արուեստին, խիստ չափաւոր սկզբնաւորութիւն մը ունեցան ի Թրեստ։

Նոր մենաստան մը ի Թրեստ հաստատելու եռանդեամբ, հաղիւ երկու տարի անցեր էր իրենց նոր հաստատուելուն վրայ, առանց լքանելու ոչ նիւթական միջոցաց պակսութենէ և ոչ իրաց և դիպուածոց ձախող պարագաներէ, փութացին իրենց համար մնայնաւոր տպարան մը ունենալու աշխատութեան ետեւէ ըլլալ, որուն արտունութիւնն և կայսերական հրամանագիրն ընդունելով յաւարիական պետութենէ, երկու տեսակ գիր ձուլել տուին, նոր հայերու և մաց վրայ, բոլորգիր և նօտր, իրենց ամէն կարեւոր պարագայիւք, զլխագիրներով և ծաղկագրօք, և սկսան տպագրութեան գործով զբաղիլ։

Առաջին հրատարակութիւնն՝ ոտանաւոր գրուած մ'է ի պատիւ՝ իրենց մենաստանին օգնականութեան և պաշտպանող ձեռք կարկառող կայսեր, մեծագիր երես մը միայն։ Բուն առաջին երկասիրութիւնն, 1776ին եղած է. և խորագիր կը կրէ. "Ցորդորակ առ պաշտօնասիրութիւն սրբոյ Աստուածածնի",։ Եւ ի յառաջաբանին կը ծանուցանեն երախտապարտ սրտիւ, թէ . . . "Կամեցաք զի առաջին պտուղ տպարանիս լինիցի ի պատիւ սրբոյ Աստուածամօրն, իբր ցոյց երախտագիտութեան մերոյ առ նա վասն այցելութեանն, զոր հաւատամք միջնորդութեամբ նորա արարեալ մեզ Աստուծոյ",։

Առաջին տարիներն բոլորովին տարրական և ամենանշան տետրակներ հրատարակուեցան իրենց տպարանէն. և գտնուած դիրքերնուն մէջ կարելի չէր աւելի բան մը յուսալ. բայց 1783ին և հետեւորդ տարիներու մէջ աւելի կարեւոր և հետաքննական երկասիրութիւնք ալ կ'ընծայուէին, յորոց ոմանք միաբանից թարգմանութիւնք էին, և այլք աշխարհիկ ծանօթից և բարերարաց. ինչպէս Թոռղրք զՁիւնաց, Քաղաքավարուհեան գիրք ի 1783, և հետեւեալ տարւոյն մէջ Եզոբոսի առակք, Վիպասանուհիւն Ամերիկոյ, Տնօրէնուհիւն մարդկային կենաց, և քիչ շատ գործունէութեամբ կը շարունակեն մինչեւ 1809, յորում Աշետարան մը միայն հրատարակուած կը գտնենք իրենց տպարանէն։

Թէ Եւրոպիոյ քաղաքական դիրքէն և պատերազմներէն Թրեստ քաղաքին ձեռքէ ձեռք անցնելէն, և թէ դրամական անձկութենէ կը բռնադատուին Մխիթարեանք ունեցածնին չունեցածնին թողուլ ու երթալ ապաստանիլ ի Վիեննա մայրաքաղաք, կայսերական գերդաստանին անմիջական հովանաւորութեան տակ. կը սատանան վանք, բնակութիւն, հան-